

տանէն շատ խորհրդաւոր սպանալիք մը տա-
րածուեցաւ, թէ ով որ ճիներու թագաւո-
րին մահը չ'ողբար, այնպիսին Իբս-ալ-
Աթիրէն պիտի սպաննուի: Այս կը պատահի
ժանտախտի մը առթիւ, սպանալիքը կ'ընէ
ճին կին մը, այսինքն՝ մեռնող թագաւորին
մայրը: Ճիներու թագաւորը պիտի ողբացուէր
«ով մայր, ներէ, չէինք գիտեր որ թագաւորը
մեռած է»¹ րսելով: Միջնադարեան շրջանին
Միջագետքի եւ Ասորիքի մէջ Ճիներու թագա-
ւորը կը համարուէր Աղոնիս-Թամուզ եւ ա-
սոնց մայրը, որ էր միանգամայն իրենց սիրահարը
Շամիրամ-Իշտար: Արդ ներեալ չէ ուրեմն
հոս ալ մեր մտադրութիւնը դարձնել Արայի
վրայ, որ Հայաստանի Աղոնիսն է եւ իր սի-
րահարն էր՝ ինչպէս ուրիշ առթիւ տեսանք
ճիներու եւ յաւերժահարսերու մայրը Շա-
միրամ-Աստղիկ-Արուսեակ:

Կարծեմ չափով մը գէթ ցուցուեցաւ թէ
Արայի առասպելին եւ հայ Ս. Սարգսի² միջեւ
ներքին սերտ աղերս մը կազմուած է դարերու
ընթացքին, ուսկից առթուած է նաեւ Յոյներու
Ս. Սարգսի մասին հնարած ցնորական առաս-
պելը*:

ԴՈԿՏ. Հ. Ա. ՄԱՏԻՅԱՆ



¹ Bar Hebraeus, Chronie syr. ed. Bedjan, p. 242.
Հմմտ. առ Smith, Die Religion der Semiten, էջ 317.

² Ս. Սարգիս Զորավարին պատմական ընթացիկ
շրջանը հարցը հոս մեր նպատակէն դուրս է. տե՛ս այս մա-
սին Ա. Գերեան վե՛րջ, Գեղեթիկ: Յաւելման,
Վիեննա, 1911, էջ 186-192: Յօդուածը գրած է Peters
նշանաւոր բուանգիստը:

* Պրոֆ. Ն. Աղոնց «Հին Հայոց աշխարհայեացքը»
վերնագրով «Հայրենիք» ամսաթիւերին մէջ (1926, թիւ 10-12) Արայի
եւ Շամիրամի մասին կը յայտնաբերէ հայեացքներ,
որոնք նիւթի եւ մասամբ նաեւ յօրինումներուն ամս-
պիսի աշխարհում ամսաթիւերն են ցոյց կու տան «Հանգէս
Ամսօրեայի» մէջ տարիներէ ի վեր նոյն նիւթին վրայ
իմ հրատարակած ուսումնասիրութիւններուս նիւտ, որ
ստիպուած եմ յանգիլ անհամոյ առ եզրակացութեան
թէ յարգ. Աստուծապետը օգտուելով հանդերձ իմ ու-
սումնասիրութիւններէս, չի հաճիր զստուրք յիշատակել:
Հմմտ. նաեւ իմ «Գրքոյի ծագումը եւ ղեցաբանութիւն»
երկս, Ազգ. Մամ. 21, 1920, էջ 303-304, ուր առաջին
անգամ Արայ Գեղեցիկը յիշակաւ Արեւի նիւտ ղեցա-
բանութիւնը կը համեմատուի եւ նաեւ կը նոյնացուի. Պրոֆ.
Աղոնց ին վերջին յօդուածին մէջ կը կրկնէ նոյն տեսու-
թիւնը, առանց սակայն իմ երկս յիշելու: Յարգելի Ա-
ստուծապետը անով թերեւս կարելի ըլլայ արդարացը-
նել, որ իր յօդուածաշարը աւելի հասարակ ժողո-
վրդի համար գրած ըլլալուն աննպատակ համարած
ըլլայ տեղիքներու ձգտիտ յիշատակումը:

Պ Ա Յ Մ Ա Կ Ա Ն

Տ Ի Գ Բ Ա Ն Բ.

ԵՒ

ՀԱՅ-ԼՈՒԿԱՆԻԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՀԱՏՈՒԱԾ Գ.

68Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆ

Գրութիւն Գ.

Պատրաստութիւնը երկու թղթաւի բանակներու,
եւ արշաւանք Լուկոսիոսի դէպի հայկական բարձրա-
գաւառ:

1.

Բանակցութիւնը Պարթեւաց հետ:

Այսպէս ուրեմն Տիգրան իւր աներոջ այս
սրտապնդիչ ու յուսապատար խօսքերէն այնքան
կը խրախուսուի, որ, ի վերջոյ, կ'որոշէ Հռոմայեց-
ւոց դէմ սկսած պատերազմը կրկին շարունակել:
Առանց յապաղելու, երկու թագաւորը զինակից-
ներն իսկոյն կը սկսին պատրաստուիլ, ու Հռո-
մայեցւոց դէմ պաշտպանութեան միջոցներ ձեռք
առնուի: Այս առթիւ Տիգրան, որ իւր անձին դառն
փորձովը զգացած էր վերջապէս Միհրդատի՝ հոռ-
մեական պատերազմներու մէջ ունեցած առաւել-
լագոյն փորձառութիւնը, կը յանձնէ անոր, լիա-
զօր իշխանութեամբ, զինուորական գործերու վե-
րին վարչութիւնը: Միհրդատի կը յանձնարա-
րուի, հետեւաբար, նոր բանակ մը կազմել, ու
նոյնին գերագոյն հրամանատարութիւնն ստան-
ձնել¹: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ վերահաս
ձմեռն եւս կ'օգտագործեն նորակազմ բանակը
հռոմեական ձեւով մարզել տալով², ու դեռ նո-
րանոր զինակիցներ իրենց շուրջը համախմբելով:

Այս 68 տարւոյն պատերազմին վրայ խօսող
մեր հին աղբիւրներու շարքին նոր մը եւս այժմ
կ'աւելնայ՝ Կասիոս Գիոն: Անոր երկին մէկ մեծ
մասը Գալիլիէնոսի քաղաքաճոյից մէջ հատակո-
տոր եղանակաւ միայն պահուած է, եւ այս պատ-
ճառաւ ալ պատերազմի առաջին տարւան մասին

¹ Memnon, c. 58 եւ Appianus, Mithr. c. 87. Հմմտ.
նաեւ Կասիոս Գիոն, գիրք. ԼԵ, գլ. 1:

² Միհրդատի ծառայութեան մէջ գտնուող յոյն սպա,
ներու եւ հռոմայեցի եկերու միջոցաւ:

մեր դիտցածը շատ թերի է: Այսպէս չէ սակայն պատերազմի երկրորդ տարւոյն համար: Հոս, Գիտն իւր պատմութիւնը գրեթէ այն տեղէն կը շարունակէ, ուր Մեմփոս — որ ցարդ մին էր մեր ամենագլխաւոր աղբիւրներէն — կը վերջացնէ, այս է՝ Պարթեւաց զրկուած դեսպանութենէն: Գիտն, յամենայն դէպս, իւր պատմութեան այս մասին մէջ օգտուած ըլլալու է Սալլուստիոսէ, ինչ որ արդէն բացայայտօրէն կը տեսնուի պատմագրիս հատակոտորներուն, ինչպէս նաեւ Պլուտարքոսի պատմութեան հետ անոր ունեցած բազմաթիւ նմանութիւններէն: Եւ եթէ Պլուտարքոս ու Գիտն երբեմն իրարմէ կը շեղին, պատճառն այն է որ առաջինն ունեցած է իւր առջեւ ուրիշ աղբիւր մը եւս:

Արդ, երկու դաշնակիցներու համար կարեւորագոյն խնդիր էր այժմ գիտնալ Պարթեւներու՝ Հայոց այս վաղեմի թշնամիներուն, իրենց հանդէպ բռնելիք դիրքը: Հարկ էր, ամէն գնով, զանոնք եւս իրենց կողմ շահիլ, եթէ ոչ ուղղակի զինակցութեամբ, գոնէ խիստ չեզոքութեան մը զանոնք պարտաւորելով, որպէս զի մի գուցէ Հռոմայեցւոց հետ ընդհարման մը միջոցին, պետութեան արեւելեան սահմաններն անոնց կողմէ ասպատակուին: Այս նպատակաւ դեսպանութիւն մը զրկուեցաւ Պարթեւաց թագաւոր՝ Հրահատի, զայն Տիգրանի հետ հաշտեցնելու, եւ միանգամայն անոր զինակցութիւն առաջարկելու ընդդէմ Հռոմայեցւոց:

Հրահատ որդին էր Սանատրուկի, որուն 70/69 (ոլիմպիադի 177, 3) թուականին յաջորդելով, պայազատած էր հայրենի տէրութիւնը: Պարթեւ թագաւորին՝ որուն զրկուած էր դեսպանութիւնը, այս անուան մեր աղբիւրներէն միմիայն Մեմփոսի ու Փլեգոնի քով կը հանդիպինք, որ դեռ իսկ անոր «Աստուած» մականունը կուտայ. մինչդեռ Վասիոս Գիտն ու Սալլուստիոս սովորական ձեւով զայն պարզապէս Արշակ կ'անուանեն¹:

Պարթեւներու զրկուած այս դեսպանութիւնն եւս Միհրդատի ազդեցիկ խորհուրդներուն արդիւնքը պէտք է համարիլ: Դա էր որ փաստացիօրէն շեշտած էր անոնց հետ հաշտութիւն ու զինակցութիւն կնքելու հրամայական պահանջը, որ եւ յաջողեցաւ իւր կամքը պարտադրել երբեմնի այնքան սէգ ու ամբարտաւան Տիգրանի: Այն ամէն երկիրները, զորս երբեմն Տիգրան կորզած էր Պարթեւներէ, այսպէս Միջագետք, Ագի-

աբենէ եւ «մեծ հովիտները» — հաւանաբար Ստրաբոնի¹ քով յիշատակուած ձորագաւառները — հարկ էր անպատճառ ետ դարձնել, եթէ ընթրէն կ'ուզէր Տիգրան Պարթեւներն իւր կողմ շահիլ ընդդէմ Հռոմայեցւոց²: Այսպիսի ծանր պայմանագրութեան մը զՏիգրան յօժարեցնել հաւանեցնելը շատ ալ դիւրին գործ էր, զոր սակայն Միհրդատի հանձարեղ ու գործնական միտքը կրցաւ յաջողութեամբ գլուխ հանել:

Մինչ այս մինչ այն, մեկնեցաւ վերջապէս դեսպանութիւնը, որուն յատկապէս յանձնած էր Միհրդատ նամակ մը եւս առ Հրահատ, որուն մէջ նա պարթեւա-հայ զինակցութենէ մը Պարթեւաց ձեռք բերելիք մեծամեծ շահերն ու առաւելութիւնները շեշտելէ ետք, կը ջանար համոզակեր խօսքերով համոզել Պարթեւ Տիգրանի հետ համաձայնիլ ու դաշնակցիլ ընդդէմ Լուկուլլոսի: Իւր այս գրութենէն դրական արդիւնք մը կարող էր իրաւամբ ակնկալել Միհրդատ, վասն զի ինքն անձամբ շարագրած էր զայն, որ հայ ու պարթեւ արքունեաց միջեւ տարիներէ ի վեր տիրող այս ներկայ ոչ բարեկամական ու ցուրտ յարաբերութեան բնաւ մասնակցութիւն ու կցորդութիւն ունեցած չէր: Պերճախօս ու ճարտարաբան խօսքերով ջանահար կ'ըլլար հոն ծերունի թագաւորը Հրահատը համոզելու որ զգուշանայ Լուկուլլոսի անյադ երկրակալութենէն, որուն ինք, Հրահատ եւս պիտի չուշանար դառն փորձն առնուլ, եթէ երբեք Հռոմայ յաղթական լեգէոններն անգամ մը յաջողէին Պարթեւներու հարեւան այս երկրին վրայ ոտից կռուան մ'ունենալ: Այս իսկ պատճառաւ ահա պէտք էր Հրահատ այժմէն, եւ այն առանց ժամանակ կորսնցնելու, ներկայ նպաստաւոր վայրկեանը, ուր Հայաստան դեռ իսկ տակաւին դիմագրութեան բաւականաչափ ոյժ կը զգայ իւր մէջ, յօգուտ գործածելով, իրեն ու Տիգրանի հետ համագունդ Հռոմայեցւոց վրայ գրոհ տալ, որպէս զի այսու անոնց աշխարհակալութեան անյադ տենչին մի անգամ ընդ միշտ վերջ տրուի:

Որչափ որ ալ նամակիս պարունակութիւնը պատմագրին մտքին երեւակայութեան ծնունդն ըլլայ, այսու հանգերձ նա հաւատարմօրէն կը ցուցնէ մե Նոյն ատենուան երկու հարեւան աղբիւր միջեւ տիրող քաղաքական աղբրան ու յարաբերութիւնքը: Եւ արդէն այս ձեւով ու այսպիսի իմաստով կարող էր գրած ըլլալ Միհրդատ,

¹ Հմմտ. առ. այս՝ Մեմփոս, ԳԼ. 58, Փլեգոն, հակաբք. 12, Գիտն, գիրք. ԼԵ. ԳԼ. 1 եւ Սալլուստիոս, Դ. հակաբք. 69:

¹ XI. 14, 15 (532):

² Մեմփոս, ԳԼ. 58, Գիտն, գիրք. ԼԵ. ԳԼ. 1:

եթէ կը յուսար Պարթեւէ օժանդակութիւն ստանալ¹:

Թէեւ շատ նպաստաւոր էր Հրահատի եղած առաջարկն ու հրապուրիչ՝ ձեռք բերելիք շահը, սակայն թարմ էր տակաւին Պարթեւաց յիշողութեան մէջ Հայոցմէ իրենց ցեղին եղած զրկանաց դառն յիշատակը, ու դեռ չէր սպիացած Տիգրանի՝ անոնց ազգային արժանապատուութեան տուած մեծ հարուածը: Այս կրկնակ պատճառներուն համար մերժեց Հրահատ իւր թշնամոյն բարեկամական ձեռք կարկառելով, իւր իրաւունքներուն տիրանալու մասին իրեն եղած առաջարկն, եւ նախընտրեց Լուկուլլոսի դեսպանութիւն ղրկելով՝ անոր իւր զինակցութիւնն առաջարկել²: Հրահատի կողմէ ինքնաբերաբար եղած այս առաջարկին վրայ չափազանց ուրախացած՝ որոշեց Լուկուլլոս ինքն եւս պատգամաւորութիւն ղրկել անոր, ու Պարթեւաց հետ բարեկամական դաշինք կնքելով՝ զանոնք խիստ չէզոքութիւն պահելու պարտաւորել ամէն պարագայի մէջ: Իւր այս պահանջման աւելի մեծ կշիռ ու բարոյական ազդեցութիւն տալու նպատակաւ, սկզբան անոր միմիայն իւր դաշնակիցներէն կազմուած պատգամաւորութիւն մը ղրկեց, որուն անկողմնակալ ու անշահախնդիր միջնորդութենէն շատ աւելի արդիւնք կարող էր Լուկուլլոս ակնկալել: Արդարեւ ալ այս պատգամաւորութիւնը յաջողեցաւ Լուկուլլոսի ու Հրահատի միջեւ նախնական համաձայնութիւն մը գոյացնել, որուն համաձայն Պարթեւ կը պարտաւորուէին պարթեւ զօրաբաժին մը Լուկուլլոսի տրամադրութեան յանձնել:

Երբ Հռոմայեցի զօրավարը սակայն դաշնադրութիւնը ստորագրելու համար իւր բարեփորձ տեղակալը Սեքստիլիոս — առ Գիոնի Σηχιλίουսի այլափոխուած — Պարթեւաց արքային ղրկեց, վերջինս սկսաւ իսկոյն երկմտել, թէ Հռոմայեցի այս բարձրաստիճան սպան պարզապէս իւր լրտես է որ կուգայ պարթեւ զինուորական ոյժը լրտեսելու, եւ ոչ թէ իբր դեսպան, որով եւ սկսաւ այնուհետեւ կասկածով վերաբերուիլ Հռոմայեցւոց հանդէպ: Միաժամանակ, մէկ կողմէ Հռոմայ ռեսերիմ թշնամի երկու դաշնակից արքաներու, եւ միւս կողմէ Հրահատի միջեւ գաղտնի բանակցութիւնը դեռ կը շարունակուէին: Երկու արքունեաց միջեւ բուռն թափով յառաջ տարւող հակահռոմէական այս բանակցութիւններէն անհնար էր թէ անտեղեկ մնացած ըլլար Լուկուլլոս: Հռոմայեցի արթնամիտ զօրավարը, որ

ուշի ուշով կը հետեւէր երկու հարեւան աղգերու իրարու հետ վերջնականապէս հասկացողութեան գալու համար թափած ծիգերուն ու մեծամեծ զոհողութեանց, բնական է, չէր կարող այնուհետեւ Հրահատի վրայ յոյս դնելով՝ անկէ՛ ոնկէ զինուորական օժանդակութիւն ակնկալել: Մէկ խօսքով, Լուկուլլոսի ու Հրահատի միջեւ կայանալիք բարեկամական դաշնադրութեան յաջորդած էր երկակողմանի անխտաճութիւն մը: Ասոր հետեւութեամբ Հրահատ, որ ամբողջ բանակցութեանց միջոցին երկդիմի դեր խաղացած էր, իւր նախապէս տուած խոստման դրժելով՝ զլացաւ Լուկուլլոսի խոստացուած օժանդակ զօրագունդը հռոմէական բանակատեղին ղրկելու ոչ այսչափ միայն, այլ եւ միտքը դրաւ երկու հակամարտ կողմերու հանդէպ եւս չէզոք դիրք բռնել, ու անոնց ուժասպառ վիճակէն օգտուելով՝ իւր պետութեան սահմաններն ի վնաս անոնց ընդարձակել¹:

Այսու, կը յուսամ, մի անգամ ընդ միշտ լուսաբանած ըլլալ, նախ՝ մեր առաջիկայ աղբիւրներուն իրարու հետ ունեցած անմիաբանութիւնը, եւ երկրորդ՝ այն տարօրինակ ընթացքը պարթեւ ինքնակալին, որ, ըստ Ապպիանոսի, Պլուտարքոսի ու Մեմնոնի, երկու կողմերու հետ եւս կը պայմանագրուէ: Եւ, յամենայն դէպս, միտում չունիմ բնաւ ընդունելու որ հեռատես Հռոմայեցին ամենադոյզն դիտաւորութիւնն իսկ ունեցած ըլլայ այսպիսի անհաւատարմութեան կամ խոստմանազանցութեան մը համար Պարթեւաց դէմ պատերազմ բանալ ուղեւոր, եւ անդին երկու ահաւոր դաշնակիցներն, իբր արհամարհելի բանակութիւն մը, բնաւ նկատի չառնու: Լուկուլլոս շատ ալ լաւ կը ծանչնար յամառ Պոնտացւոյն նկարագիրը, որ հանդարտ չէր կրնար կենալ, եւ եթէ անխոհեմութիւնն ունենար Լուկուլլոս արդեամբք Տիգրանի վրայ արշաւելու, ապահովաբար Միհրդատ, պատեհ առ թէն օգտուելով, հռոմէական բանակը թիկունքէն անխրնայ պիտի հարուածէր: Տիգրանի ցարգ ունեցած կորուստը քանի մը սահմանազաւառէ անդին չէր անցներ, մինչդեռ անոր գերիշխանութեան ներքեւ գտնուող ընդարձակածաւալ պետութեան մը ներկայացուցած զինուորական ոյժը տակաւին շատ պատկառելի կը մնար Հռոմայեցւոց աչքին: Հետեւաբար, յառաջ քան Հռոմայեցիք նոր ու երկարաձիգ պատերազմի մը ձեռնարկելը, պէտք էին անոնք նախապէս Հայաստանը

¹ Սալլուստիոս. Գ. հատակոտորք 69:

² Plut., Luc. c. 30.

¹ Հմմտ. այս դեսպանութեանց մասին Գիոն, Գիրք

Լեւ. ԳԼ. 3:

զինամասի ըրած ըլլալ՝ անոր զինուորական ոյժն ամբողջապէս խորտակելով: Այս պարագան լաւ ըմբռնած ըլլալու էր նաեւ Ղուկուլլոս, որ վրէժ լուծելու իւր դիտաւորութիւնը — եթէ երբեք ունեցած էր նա այդպիսի միտք մը — ապահովաբար յետաձգած ըլլալու էր զայն անդրադոյն ժամանակի մը, մինչեւ որ նա երկու դաշնակից արքաները վերջնականապէս պարտութեան մատնելով՝ հայ բանակն ամբողջովին քայքայէր¹:

Հնար էր, սակայն, առաջին հայեցումաբար, այնպէս կարծել, որ Ղուկուլլոս իւր ձմերոցը պարթեւական սահմաններուն այնքան մօտ փոխադրելով՝ մտադրութիւն ունեցած ըլլար Պարթեւաստան եւս արշաւելու: Սակայն Ղուկուլլոսի՝ Կորդուքն իբր ձմերոց ընտրելուն գլխաւոր ազդակը պարզապէս նիւթական կարող էր եղած ըլլալ, եւ ոչ՝ քաղաքական. վասն զի այդ վայրը — ինչպէս վերեւ տեսած էինք — այդ կողմերու ամենահարուստ ու ամենալից մէկ գաւառն ըլլալուն՝ դիւրաւ կարող էր Ղուկուլլոս իւր բանակը պարթեւաւորել Հայաստանի խիստ ու երկար ձմերուան ամբողջ տեւողութեանը. բաց աստի, այդ երկրին բնիկները, Կորդուքը, սրտի մտօք Ղուկուլլոսի յարած ու հիւրընկալ ասպնջականութիւն ցոյց տուեր էին անոր իբր իրենց բարեկամին ու ազատարին:

Որչափ որ ալ Ղուկուլլոսի՝ Հրահատի հետ կնքել փափագած բարեկամական դաշինքն եղծած լուծուած էր այլ եւս, սակայն եւ այնպէս նա հաստատապէս համոզուած էր, որ ո՛նեւ չարիք պիտի չսպառնար Հռոմայեցւոյ՝ Պարթեւաց կողմէ, եթէ նա իւր հայկական արշաւանքը կրկին սկսէր: Զատ խնդիր, եթէ Ղուկուլլոս, ընդդէմ Հրահատի, յայտնապէս պատերազմի պատրաստուած ու իւր զօրաց ապստամբութեամբ միայն խափանուած ըլլար անոր հետ զարնուելէ: Արդ, եթէ այսպիսի պարագաներու ներքեւ համարձակէր Ղուկուլլոս ինքնակամ դիմագրաւ Հայաստան արշաւել երկրորդ անգամ, ապահովաբար, Հրահատ եւս պիտի գիտնար այս պատահագոյն առթիւն անմիջապէս օգտուելով՝ հռոմէական յառաջնադաշն բանակին թիկունքը տագնապեցնել:

Ես սակայն հոս այսպիսի խորհրդածութիւններու պատճառ բնաւ չեմ տեսներ. վասն զի որ մէկ ազգ կամ պետութիւն երկրորդի մը դէմ պատերազմ հրատապակել պիտի ուզէր, որուն

նախապէս օժանդակութեանը դիմած էր ընդդէմ երրորդի: Այսպիսի անհետեւողականութիւն մը մենք չենք կարող վերագրել հռոմայեցի զօրավարին, տեսնելէ յետոյ անոր, պատերազմի առաջին տարիներուն մէջ ցոյց տուած կարողութեան ու հեռատեսութեան կարկառուն ապացոյցները, եւ այն՝ բազմաթիւ պարագաներու մէջ: Թէեւ մեր պատմագիրներէն Պլուտարքոս, Եւտրոպիոս եւ Ռուփոս, Ղուկուլլոսի՝ Պարթեւաց դէմ պատերազմելու դիտաւորութեան մասին յիշատակութիւն կ'ընեն, սակայն, ընդհակառակը, Կասիոս Դիոն, Ապպիանոս ու Մեմնոն զայն բոլորովին կ'անգիտանան¹: Ռայնախ², Նիդէ³, Գարաբաշեան⁴ եւ Դր. Աստուրեան⁵ Պլուտարքոսի ընդարձակ նկարագրութենէն զգալիօրէն ազդուած կ'երեւին, մինչդեռ Մոմմէն⁶ պարթեւական արշաւանքի մը մասին ո՛նեւ դիտաւորութիւն չի վերագրեր Ղուկուլլոսի, այլ միայն իբր զօրաց մը զայն կը յիշատակէ, զոր անոր հակառակորդները բանակին մէջ տարածեր էին, որպէս զի զօրքն իրեն դէմ գրգռեն:

2.

Հայերը զօրք կը գումարեն ու նոր բանակ մը կը սպառազինեն:

Միհրդատի՝ պարթեւ արքայն իր կողմ շահելու բոլոր ջանքերն ի գերեւ ելելէ ետքը, երկու դաշնակիցք՝ այլ եւս արտաքին օժանդակութենէ յուսակտուր, կ'որոշեն միահամուռ զօրաժողով ընել, եւ ի զէն հրաւիրել զինուորական ծառայութեան ենթակայ բոլոր իրենց հպատակներն, ի պաշտպանութիւն հայրենատուր հայրենաւնդ հողին: Թէեւ Ապպիանոս այս զօրաժողովը միմիայն Հայոց մէջ կը սահմանափակէ⁷, (որոնք, բնականաբար, միւս հպատակ ազգերէ շատ աւելի տիրայօժար պէտք էին փութացած ըլլալ հայրենեաց կոչին, գիտնալով որ իրենց ընտանեաց ու ստացուածոց պաշտպանութեան համար էր սոյն պատերազմը, առաջնորդութեամբ իրենց բնիկ արքային, որուն անձին հանդէպ իրենք՝

¹ Հմմտ. Plut., Luc. c. 30; Eutr., Brev. VI. c. 9; Sext. Rufus, c. 15; Dio XXXV. c. 3; Appianus, Mithr. c. 87; Memnon, c. 58.

² Անդ, էջ 363:

³ Grundr. der röm. Geschichte, S. 194, հմմտ. էջ 217.

⁴ Քննական պատմ. Հայոց Բ. 148:

⁵ Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմայ, Վենետ., էջ 61:

⁶ Römische Geschichte, III, էջ 74.

⁷ Mithr. c. 87.

¹ Հմմտ. առ. այս Սեքստոս Ռուփոս էջ 15, որ Մծբինի Գրաւ. մէջ յետոյ պարթեւական արշաւանքի մը պատրաստութիւններու վրայ կը ճառէ: Նշելով Eutropius, Brev. VI. c. 9.

հակադրութեամբ նուաճուած օտարացեղ ու այլատոհմիկ ազգերու, առաւելագոյն հաւատարմութեան ու տիրաւորութեան զգացում իրենց սրտերուն մէջ պէտք էին տածել), սակայն Պլուտարքոսի¹ քով վրաց ու Մարգացեաց եւս անուններուն յիշատակութեան կ'իմացուի, որ այս պատերազմին իրենց մասնակցութիւնը բերեր էին նմանապէս Հայաստանի նոյն ատենուան հարկատու եւ նիզակակից երկիրները: Ասկէ սակայն հետեւեցնել, թէ 68 թ. պատերազմն ուրեմն բոլոր արեւելեայ ընդդէմ Հռոմայ միահամուռ մղած ազգային ու կրօնական մէկ պատերազմն էր, սխալ է, ու այսպիսի անհիմն եղրակացութեան մը յանգելու ես բնաւ պատճառ մը չեմ տեսներ²: Արդէն հայագունդ բանակին զօրութիւնը — իբր 100.000 ըստ Ապպիանոսի³ — բացէ ի բաց կը ջրէ ու կը տարամերժէ այդպիսի ձրի ու անհիմն ենթադրութիւն մը: Եւ որքան նուազ է այդ գումարը նոյն հեղինակին նախորդ տարւոյն պատերազմին համար նշանակածէն, որ միջոցին, լաւ միտ գնելու ենք, որ Հայք ու իրենց հարեւան դաշնակիցները պարզ պատերազմն էր որ կը մղէին, առանց ո՞նե կրօնական կամ ազգային կնիք մը նոյնին դրոշմելու: Հետեւաբար հնար է այլ եւս գուշակել թէ որքան առաւել բաղմամբ եղած պիտի ըլլար թիւը հայ զօրաբանակներուն, եթէ բոլոր ասիական ժողովուրդները միահամուռ մասնակցած ըլլային այս պատերազմին:

Ասիական ժողովուրդներու վերագրուած կրօնական ու ազգային պատերազմի մը այս բոլոր ենթադրութիւնը ծնունդ առած է Վիկերոնի վասն Պոմպէի խօսած ճառին մէկ տեղիքէն⁴, ուր, հռոմայեցի հռետորը, ինչպէս եւ այլուր, քաղաքական կացութիւնն ի նպաստ իւր արտասանած ճառին ուղղութեան ստուարացուցած կամ բոլորովին չեղ ներկայացուցած է: Այն ճառին ոգին ու անոր ամբողջ կապակցութիւնն, ըստ իս, — եթէ բացարձակապէս Վիկերոնի խօսքերուն

կապուած մնանք — մէկ ենթադրութեան միայն հնարաւորութիւն կը թողատրէ, այսինքն թէ ճառախօսն այսու ընդհանրապէս հայկական պատերազմին սկզբնաւորութիւնը՝ ուստի եւ 69 թ. աւանդ նկատի առած է¹: Արդարեւ ալ մենք վերը տեսած էինք, որ Ասիոյ ժողովուրդներէն շատերը իրենց բանակներովը զօրավիգ եղած էին Հայոց, ուսկէ շատ կարելի է որ Վիկերոն ազգային պատերազմ մը ստեղծած ըլլայ: Եւ արդէն Վիկերոնի դաւաճանօրէն յարձակման ենթարկուած խեղճ Հայերն իրենց աստուածներուն համար պատերազմեցնել տալը որոշ նպատակի մը համար է. նա կը դիտէ այսու լուկուլոսը՝ որ առանց հրամանի ու առանց պատճառի, լոկ աշխարհակալութեան տենչով խաղաղ ժողովուրդներու վրայ կը յարձակի, Պոմպէոսի հակադրելով, վերջոյս բարեմասնութիւնն ու անոր լուկուլոսի վրայ ունեցած առաւելութիւնն երեւան հանել:

Եթէ այս բոլոր ասիական ժողովուրդներու մէջէն՝ որոնք «միախուռն ու դունդագունդ, հեռաւոր ու մերձաւոր վայրերէ, Արքայից արքային օգնութեան փութացեր էին, Արեւելքն ու իրենց աստուածները եղեռնագործ ու ամպարիշտ օտարականներու դէմ պաշտպանելու»², Միհրդատ յարմարագոյնները միայն զատելով՝ զանոնք զինուորական կրթութեամբ հրահանգել տուած էր, — որովհետեւ փորձը ցոյց տուած էր, որ «հաւաք մարդակոյտ բաղմութիւնները միագունդ վարելը»՝ յաջողութեան յոյսերով բեղուն պատերազմի մը մէջ աւելի արգելք հանդիսացեր էին, քան եթէ օգուտ, ապա ուրեմն ինչ պատճառ ունէր Միհրդատ ա,ս բոլոր արեւելեան ազգերէն ընդհանուր զօրաժողով ընել հրամայելու, քանի որ անոնց մեծագոյն մասը յետոյ անմիջապէս դարձեալ իրենց տեղերը պիտի արձակէր: Այսպիսի անխորհուրդ գործ չէ կարեւ-

¹ Plut., Luc. c. 31.

² Հմմտ. տո. այս ի մասնաւորի Mommsen, Röm. Gesch. III, S. 72/73 և Reinach, S. 362.

³ Mithr. c. 87.

⁴ De imp. Cn. Pomp. c. 9 § 23: Cuius (— Տիգրանի) in regnum posteaquam L. Lucullus cum exercitu venit, plures etiam gentes contra imperatorem nostrum concitatae sunt. Erat enim metus iniectus iis nationibus, quas nunquam populus Romanus neque laessandas bello neque temptandas putavit; erat etiam alia gravis atque vehemens opinio, quae animos gentium barbararum pervaserat, fani locupletissimi et religiosissimi diripiendi causa in eas oras nostrum esse exercitum adductum. Ita nationes multae atque magnae novo quodam terrore ac metu concitabantur.

¹ Ասան զի վերոյիշեալ տոյն խօսքերն անընդմիջաբար կը հետեւին այն նախադասութեան, ուր պարտուած Միհրդատի Տիգրանի կողմէ գտած ասպնջականութիւնը կը նկարագրուի հետեւեալ տողերուն մէջ. Hunc in illo tempore et fuga Tigranes, rex Armenius, excepit diffidentemque rebus suis confirmavit et addictum erexit perditumque recreavit. (Այս խօսքերն իրենին արգէն պայծառագոյնս կը պատկերացնեն Վիկերոնեան պատմագրութիւնը, եթէ միտ դրած ենք թէ որքան, իրականութեան մէջ, այդ նկարագրուածէն սլլազգ տեղի ունեցած էր տոյն ասպնջականութիւնը Հայաստանի մէջ) — Իսկ թշնամի մարտաքաղաքին գրաւումը նոյն անմիջապէս կը յաջորդէ. Noster autem exercitus tametsi (այսինքն, թէեւ այսքան ազգեր Հռոմայ դէմ զենք վերցուցին) urbem ex Tigranis regno cepit... մինչդեռ մեր տեղիքն եթէ իրապէս 68 թ. աւանդին կը վերաբերէր, այդ պարագային պէտք էր նաեւ այդ գրաւումը կանխաւ յիշատակուած ըլլալ:

² Mommsen, Römische Geschichte III, S. 72/73.

լի վերագրուիլ Միհրդատի նման հանձարեղ զինուորականի մը, որուն առաջին ու գլխավոր հոգն էր, ամէն բանէ յառաջ փոքրաթիւ սակայն քաջամարդ բանակ մը կազմել, որ թեթեւաշարժ ըլլար այդ խոսքին ու վայրենի լեռներու վրայ մղուելիք պատերազմներու մէջ, եւ երկրորդաբար՝ դիւրաւ ու ապահով կերպով կարելի ըլլար զայն պարենաւորել, պատերազմի միջոցին: Բաց աստի, ինչ շահ ունէին հեռավոր երկիրներու բնակիչները պատերազմի մասնելու Տիգրանի մը սիրոյն, որուն՝ 25 ամեայ տիրապետութեան մը միջոցին, վարած անմիտ ու բռնապետական քաղաքականութիւնն անոնց արդար կասկածն ու անվստահութիւնը միայն գրգռելու նպատակ էր: Կոյն իսկ Պարթեւները, որոնք սահմանորդ էին Հայոց, եւ որոնք այնքան մօտ էին մարտավայրին, եթէ չկարողացան իրենց՝ Հայոց հանդէպ ունեցած ազգային հին ատելութեան յաղթելով՝ անոնց բարեկամական ձեռք կարկառել ու օգնել, հապա ինչպէս կ'ուզուի որ հեռաբնակ ժողովուրդները յօժարած ուզած ըլլան թեւ թիկունք ըլլալ իրենց համար բռնորոշ օտարացեղ ու հեռաբնակ Հայերու, ընդդէմ նոյնքան եւ աւելի օտար Հռոմայեցւոյ:

Ասիացի այս ժողովուրդներու կրօնական միութեան խնդիրն ինքնին արդէն նորագոյն ժամանակի մէկ գիւտն է, որ թերեւս Խալամի սուրբ պատերազմին շատ աւելի ճիշդ պատշաճէր, քան ողբոյն այն ատենուան դարուն, ուր իւրաքանչիւր գաւառ իւրայատուկ կրօնական միջավայր մ'ունէր. մինչդեռ յատուկ իմաստով բոլոր ասիական ազգերու սեպհական կենդրոնական սրբավայր մը, այնպէս ինչպէս կ'երեւակայէ Վիկերոն, ոչ մի կողմ՝ գոյութիւն ունեցած էր երբեք:

Յայտ վայր ըստաւաններէն ալ եւս յայտնապէս կը հետեւի, որ Հայք միայն իրենց սեպհական ուժովն եւ նախորդ տարւոյ իրենց դաշնակիցներուն ընձեռել կրցած օժանդակութեամբը կարող կ'ըլլան նոր բանակ մը եւս կազմել: Եթէ սակայն յետ այսչափ բանաւոր պատճառաբանութեանց, դեռ իսկ գտնուին ոմանք, որ յամառին հակառակ կարծեաց թեր ելել, թող այնպիսիները մեկնութիւն տան, թէ ինչպէս կարելի է տրամաբանօրէն մտածուիլ որ Հայք, որոնք այնքան մեծ դիւրութեամբ կրցեր էին դեռ հեռուն մարդակոտ բազմութիւններէ կազմուած ահաւոր բանակներ համախումբ գումարել, իսկ հիմայ, տարի մը յետոյ, Հայաստան աշխարհը իւր բնակիչներէն, յանկարծ, այնքան մարդաթափուր եղած կը նուազի, որ անոնք եւ ոչ իսկ պէտք

եղած տարրական ոյժը կարող կ'ըլլան գումարել, հայրենեաց գոյութեանը սպառնացող յայտնի վտանգի մը պահուն: Մինչդեռ մենք, մանաւանդ թէ որոշակի գիտենք այլուստ, որ Միհրդատի կոչին ներկայացողներու թիւն այնքան շատ կ'ըլլայ, որ նա կը ստիպուի անոնց մէջէն լաւագոյններն ու յարմարագոյններն ընտրանք զատել հայ դրօշի ծառայութեան: Հայոց այս ընդհանուր զորաժողովին իրենց մասնակցութիւնը բերին յետոյ դեռ քանի մը դաշնակիցներ եւս: Ահա այս ու այսպիսի հսկայ մարդկային զանգուածէն զօրընտիր ընելով կազմեց Միհրդատ փոքր, սակայն քաջակիրթ բանակ մը, որուն զորաթիւր Ապպիանոս 70.000 հետեւակ եւ 35.000 ձիաւոր կը նշանակէ¹: Ես սակայն պատմագրիս ցոյց տուած այդ թիւերը, թէեւ անոնք նախորդ տարւաններուն հաւասարին, այսու հանդերձ դարձեալ չափազանց կը գտնեմ: Եթէ անգամ մը եւս նկատողութեան առնունք երկրին աշխարհագրական դիրքն ու անոր ունեցած գերազանցօրէն լեռնային հանգամանքը, եւ միանգամայն, պատերազմի միջոցին, անոր պատճառած անյաղթելի դժուարութիւնը, ի մասնաւորի օտարներու, որոնք լեռնաշխարհը բացարձակապէս չէին ճանչնար, այն ատեն միայն կ'ըմբռնենք, որ դեռ շատ աւելի փոքր բանակ մը կարող էր, ոչինչ աշխատանքով, հռոմէական փոքրաթիւ բանակը կասեցնել՝ անոր յառաջնադասութեան առջեւ լեռնաշխարհին բոլոր անցքերը փակելով:

Առաջին իսկ հայեացքով ինձ շատ զարմանալի ու միանգամայն անըմբռնելի կը թուի հայրուծի գունդերուն այսքան բազմապատկուիլը, եւ այն՝ Հայաստանի նման համակ լեռնային ու անանցանելի երկրի մը վրայ, ուր՝ յոլովաձեռն հեծեալներու ռազմական շարժումներուն համար անգամ, յարմար ու հարթայատակ գետիններ կը պակսին: Եթէ այս տարւան մէջ տեղի ունեցած դէպքերու ընթացքին ուշի ուշով հետեւելու ըլլանք, պիտի տեսնենք որ Միհրդատի ռազմագիտական ծրագիրն եղած էր, ըստ կարելոյն թշուառօրէն հետ շփում ունենալէ կամ անոր որոշիչ ճակատ տալէ խուսափելով՝ զայն, իւր արագոտն ձիաւոր գունդերուն միջոցաւ շարունակ վտանգաւոր դիրքեր հրապուրել, ու տեղն ի տեղ դարնել փճացնել: Միհրդատի այս մարթանքն այնքան աւելի յոյս կը ներշնչէր յաջողութեան, որ քան հռոմէական այրուծին, որ արդէն իսկ շատ ալ

¹ Mithr. c. 87. εἰς ἑπτακισμύχιους πεζοὺς καὶ ἑπταεὺς ἵππους,

տկարացած ըլլալու էր, այս անձանթ երկրին մէջ, իրեն բոլորովին օտար ու անտարբեր պայմաններու ներքեւ գրեթէ այլ եւս անօգուտ ու անզոր էր հայ բանակին վրական ու մարդական քաջամարտիկ հեծեւազոններուն հանդէպ, որոնք՝ ինքնին արդէն լեռնորդեայք, լեռնագաւառի մը հանգամանաց վարժ էին, ու անոր բազմապիսի վտանգներուն քաջածանօթ:

Արդ, այս բանակը Միհրդատ, ճիշդ հռոմէական ոճով, բաժնեց ու դասաւորեց զանազան գումարտակներու եւ գունդերու, որոնց իւրաքանչիւրին մարդիչ կարգեց իւր նախկին պոնտական զօրաբանակներուն վաստակաւոր զինուորները, պաշտօն տալով անոնց հայ զինուորները յար եւ նման հռոմէականին մարզել, ինչպէս որ նա եւս զիրենք մարդել տուած էր երբեմն հռոմայեցի քրտորականներու¹: Բաց աստի, ամբողջ ձմեռը շարունակաբար զէնքեր ու պատերազմական իրեղէններ կազմել ու պատրաստել տուաւ մեծ քանակութեամբ, նմանապէս յարմար դատած վաբերը մեծամեծ շտեմարաններ շինեց², ուր համբարել տուաւ մեծաքանակ պաշար ու ցորենեղէն, որպէս զի զօրաց սնունդը բանակեաղին մօտերը գտնուելով՝ անոնց պարենաւորման գործը զիւրանայ. ու հարկ չըլլայ զայն այդ լեռնավայրերու նեղ ու անկոխ արահետներու վրայով ու տաժանագոյն աշխատութեամբ՝ բանակին ետեւէն, ասպին անգին փոխադրել: Այսպէս Հայք ծերունի Միհրդատի իմաստուն ու աշխուրջ վարչութեան ու առաջնորդութեան ներքեւ գիտցան այս անգամ իրենց պարապոյ ժամերն հիանալիօրէն օգտագործել, ու լաւ կազմակերպուիլ: Իրենց զինուորական պատրաստութիւնը մեծ չափով արդէն աւարտած վերջացած էր, երբ Լուկուլոս վճռեց իւր ձմերոցէն ելլելով նոր պատերազմին թատերափայլը Հայաստանի ներքնաշխարհը փոխադրել:

(Շարունակելի:)

Հ. Գ. ԳԱՐԱՆՓՈԼԵԱՆ



ՀՈԼԼԱՆԳԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԺԶ - ԺԹ. ԳԱՐԵՐՈՒՄ

(Շարունակելի:)

Գ.

Առաջին հայ տպագրութիւնները: Զովհ. Անկիւրացի Մոլինոս եւ իր տպագրական գործունէութիւնը: Հռոմի Հաւատոյ Տարածման Ժողովը եւ Հայերէն Աստուածաշունչը: Առաջին հայ տպարանն Ամստերդամում: Մատթէոս Ծաւրեցի, Ղըրջնեց Աւետիս եւ Կարապետ վարդապետ՝ տպարանական գործիչներ: Ամստերդամում տպուած հայերէն գրքերը 1660—1666: Պիւրոմալի լատին կրօնաւորն Էջմիածնում: Ոսկան վարդապետ Երեւանցին: Աստուածաշունչի տպագրութիւնը: Ամստերդամի լատին նուիրակի յանձնարարականը: Ոսկանի տպած գրքերն Ամստերդամում: Ոսկանի հեռանալն եւ նոր ձեռնարկութիւնները: Զովհ. վարդապետ Հոլով:

Տպագրութեան գիւտից (1455) հաղիւ 57 տարի էր անցել երբ երեւաց նրա հայերէն օրինակը: Մեր Ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանգամանքները միշտ այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական ամէն մի նոր քայլ, ամէն մի նոր ձեռնարկութիւն միշտ լոյս է տեսել եւ իրականացել է բուն հայրենիքի սահմաններից դուրս: Այսպէս է եղած նաեւ տպագրութեան համար: Հայ տպագիրը առաջին անգամ յղացուած ու մարմնացած է այնտեղ, ուր միջոցներ ու յարմարութիւններ կային այդ նոր արհեստից օգտուելու եւ ուր նա ընդհանրապէս սկսել էր զարգանալ: Ինչպէս որ առաջին կարեւոր հայ գաղթականութիւնը եւրոպական հողի վրայ՝ հիմնուած է Վենետիկում, այդպէս էլ՝ իրերի բնական բերմամբ առաջին հայ տպագիր գիրքը իրականացած է այդտեղ, գոթերի այդ եղակի քաղաքում, ուր շարժուն առուերի գիւտից յառաջ արդէն գործածութեան մէջ էր փայտապրութիւնը, այն է՝ տախտակի վրայ փորուած տպագիրն: Վենետիկից է, որ այս արհեստը անցած ու զարգացած է Գերմանիայում եւ Հոլանդայում:

Առաջին հայ տպողը մի իտալացի է եղած, ինչպէս ենթադրուում է, ոմն Zuan Andrea: Արուեստի տեսակետից դատելով՝ հայ տպագրութեան այս առաջին փորձերը աղքատ են եղած

¹ Փիեղոնի քով, FHG III, էջ 606 հայ զինուորներու ստացած այս հռոմէական մարզանքը սխալմամբ Տիգրանի Դ-ի Դակատամարտին առթիւ նշանակուած է:

² Plut. Luc. c. 31 եւ Appianus. Mithr. c. 87.